


ՄԵՐ ՀՈՒՆԵԼՅԱՐՆԵՐԸ

ԳԵՎՈՐԳ ԶԱՀՈՒՅԱՆ

(Մենդյան 60-ամյակի առթիվ)

Լրացավ ականավոր լեզվաբան, Հայկական ՍՍՀ ԳԱ ակադեմիկոս, գիտության վաստակավոր գործիչ, Հայկական ՍՍՀ ԳԱ լեզվի ինստիտուտի դիրեկտոր Գևորգ Բեգլարի Զահույանի ծննդյան 60-ը գիտամանկավարժական գործունեության 35 տարին: Իր անձն ու գրիչը անմնացորդ նվիրաբերելով հայրենի գիտությանը՝ բազմավաստակ գիտնականը 35 տարիների ընթացքում կարողացավ հասնել գիտության բարձունքներին, դառնալ հայ լեզվաբանության առաջատար և ուղեցույց մշակներից մեկը, ձևով բերել միջազգային համբավ ու հեղինակություն:



Բեղուն է Գ. Զահույանի գրիչը և ընդարձակ՝ գիտական հետաfrհոությունների շրջանակն ու հետազոտությունների թեմատիկան: Չկա հայերենագիտության մի բնագավառ, որն իր ուսումնասիրության առարկան դարձրած չլինի նա և որտեղ սառած չլինի իր ծանրակշիռ խոսքը: Հայ բերականագիտության պատմություն, հայոց լեզվի պատմություն և համեմատական բերականություն, գրաբարի բերականության բազմաթիվ հարցեր, հայ բարբառագիտություն, ժամանակակից հայերեն, պատմահամեմատական և ընդհանուր լեզվաբանություն, համաշխարհային լեզվաբանության պատմություն, ահա նրա թեմատիկայի ոչ լրիվ րվարկումը:

Նրա գրչին են պատկանում ավելի քան 100 գիտական աշխատություններ, որոնցից հսանք մենագրական ծավալուն հետազոտություններ են: Դրանցից առանձնապես կարևոր է հիշատակել «Բերականական և ուղղագրական աշխատությունները հին և միջնադարյան Հա-

յաստանում», «Հայոց լեզվի նախագրային շրջանի պատմության ակնարկներ», «Հին հայերենի հոլովման համակարգը և նրա ծագումը», «Հայերենը և հին հնդեվրոպական լեզուները», «Հայոց լեզվի համեմատական բերականությունը», «Հայ բարբառագիտության ներածությունը», «Հայոց լեզվի զարգացումն ու կառուցվածքը», «Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները», «Լեզվաբանության պատմությունը» (երկու հատորով), «Ընդհանուր և հայ լեզվաբանությունը» և այլն:

Իր գիտական գործունեության սկզբից Գ. Զահույանը ձևոնամուխ եղավ հայ բերականագիտական մտքի պատմության ուսումնասիրությանը, որի արդյունքը եղավ «Բերականական և ուղղագրական աշխատությունները հին և միջնադարյան Հայաստանում» մենագրությունը (1954): Աշխատության մեջ ներկայացված է հայ լեզվաբանության բնական պատմությունը սկսած նրա առաջին հայերից (Ինոնիսիոս Թրակացու «Բերականական արվեստի» բարգմանությունից) մինչև հայերենի մասին տպագիր աշխատությունների երևան գալը: Առանձնապես ընդգծված է հայ բերականների դերը հունարան դպրոցի ստեղծման գործում, այն առանձնահատուկ, որ բնորոշ է հայ լեզվաբանական մտքին այդ շրջանում, վերանայված են էնդինակություններին և նրանց աշխատություններին տրված շատ զեմահատկանքներ, իսկ X—XV դդ. ուսումնասիրված են առաջին անգամ: Այս աշխատության հետևողական շարունակությունն է «Հայ լեզվաբանական միտքը և աշխարհաբարի հարցերը XVIII—XIX դդ.» մե-

նագրությունը (զոկտորական դիսերտացիա). որի մեջ մասնավորապես բնութագրվում է առկա հայ բնականների և բառարանագիտների դերը աշխարհագրի ուսումնասիրման, ամրացման և նորմավորման գործում, նոր մեկնաբանությամբ ներկայացվում է գրապայմարի պատմությունը, երևան հանվում ժամանակակից գրական հայերենի մշակման և զարգացման ուղիների վերաբերյալ եղած տարբեր տեսակետների բնույթն ու պատմական հիմքերը, տրվում է ժամանակակից գրական հայերենի նոր շրջանաբաժանում:

Իր «Լեզվաբանության պատմություն» երկհատոր կապիտալ մենագրության մեջ (1960—1962) Գ. Զահուկյանը գիտության պատմաբանի հմտությամբ ներկայացրել է համաշխարհային լեզվաբանության պատմությունը հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը՝ ներառյալ նաև սովետական լեզվաբանությունը: Հեղինակը համակարգում, վերլուծում և գնահատում է լեզվաբանական տարբեր ուսմունքներն ու ուղղությունները՝ դրանք կապելով հասարակության, գիտական մոտի՝ մասնավորապես փիլիսոփայության, զարգացման տարբեր փուլերի հետ: Աշխատանքը եզակի է իր տեսակի մեջ նյութի լայն ընդգրկմամբ, շրջանաբաժանման և համակարգման սկզբունքների հստակությամբ ու խոր գիտականությամբ:

Ակադեմիկոս Գ. Զահուկյանը հայոց լեզվի պատմության և համեմատական բնականության հմուտ հետազոտող է: Այս բնագավառին նվիրված նրա աշխատանքները ևս աչքի են ընկնում գիտական խորությամբ և բազմակողմանի ընդգրկմամբ, հայ լեզվաբանական մոտի ընթացումների հմուտ օգտագործման հետ մեկտեղ նոր հարցադրումներով ու պարբերմաների առաջադրումով ու դրանց ինքնատիպ լուծումներով:

Հայոց լեզվի պատմության ուսումնասիրության բնագավառում մեծ ներդրում է նրա առաջարկած շրջանաբաժանումը: Գ. Զահուկյանին, որպես լեզվի պատմաբանի, շատ է հետաքրքրել հատկապես հայերենի հնագույն՝ նախագրային շրջանը, որը հայոց լեզվի պատմության առավելագույն դժվար, բիշ ուսումնասիրված և մութ ու վիճարկման ենթակա հարցեր պարունակող շրջանն է: «Հայոց լեզվի նախագրային պատմության ակնարկներ» աշխատությունը (1967) նվիրված է հայերենի այդ շրջանի և համեմատական բնականության մի քանի կարևոր պարբերությունների բնութագրին: Հայերենի բաղաձայնական համակարգի պատմահամեմատական հետևողական վերլուծության միջոցով հեղինակը սահմանազատում է կողմնակի ենթադրյալ բառային շերտերը բուն հնդեվրոպական բառապաշարից, որոշում է հնդեվրոպական ազգակից լեզուներից կատարված հնագույն հայկական փոխառությունները, որոնք մինչ այդ ստուգաբանված չէին: Դա հնարավորություն է տալիս նրան ավելի կոնկրետ խոսել հայերենում հայասերների և ուրարտեների սուբստրատների իրական բնույթի մասին և մասամբ վերականգնել այդ լեզուների բառապաշարը:

Գ. Զահուկյանին շատ է հետաքրքրել Փոքր Ասիայի և Բալկանյան թերակղզու տարածքում կանգնած հնագույն լեզուների հարցը: Գործադրելով իր գիտելիքներն ու լեզուների իմացությունը և նմուրեն կիրառելով պատմահամեմատական մեթոդը՝ նա բնության առարկա է դարձրել այդ տարածքների հնագույն լեզուների և նրանց հարաբերակցության հարցերը: «Հայասերներ և նրա հարաբերությունը հնդեվրոպական լեզուների հետ» գրքում (1964), հեղինակը, հենվելով Հայաստանի անձնանունների և տեղանունների հայտնի տվյալների վրա և ուսումնասիրելով դրանք, գտնում է, որ հայասերները պատկանում է հնդեվրոպական լեզուների հինանատոլիական խմբին և որ այն հայերենի անմիջական հիմքը չէ, այլ նրանում երեւում է գալիս որպես կողմնակի հնդեվրոպական շերտ (սուբստրատ): «Ուրարտեներ և հնդեվրոպական լեզուներ» գրքում (1963) մանրակրկիտ ուսումնասիրության ենթարկելով ուրարտեների բառապաշարը և բնականական կառուցվածքը և բերելով բազմաթիվ զուգահեռներ՝ հեղինակը գալիս է այն եզրակացության, որ ուրարտեները գտնվում է ազգակցական կապերի մեջ հնդեվրոպական լեզուների հետ: Դրանով բերվում են նաև խոտիտա-հրեղեվրոպական զուգահեռներ և փորձ է արվում մեկնաբանել ուրարտեների, խոտիտա-և հնդեվրոպական լեզուների փոխհարաբերությունները: «Հնդեվրոպական, խոտիտա-ուրարտական և կովկասյան լեզուների փոխհարաբերություններ» աշխատության մեջ հնդեվրոպական, խոտիտա-ուրարտական, արարվելական, արիագա-ադիգեական և նախո-դաղստանյան լեզուների միջև եղած նմանությունների հնչյունական վերլուծության հիման վրա հեղինակը սահմանազատում է հետևորդ ազգակցության հետևանք հանդիսացող միավորները այն միավորներից, որոնք կարելի է բացատրել որպես լեզուների շփման հետևանք և փոխառություններ: Համեմատական տվյալները նա հմտորեն օգտագործում է հետևորդ ազգակցական կապի մեջ գտնվող լեզուների բնականական կառուցվածքների հնագույն ձևերը վերականգնելու համար: «Հայերենը և հին հնդեվրոպական լեզուներ» մենագրության մեջ (1970) հեղինակը բնութա-

է մի կողմից հայերենի, մյուս կողմից իլիերենի, հին մակեդոներենի, քրակերենի, ղակոմե-սերենի, պելասկերենի, փոյուգերենի, խեթա-ուրարիական լեզուների միջև եղած համընկնումների տարբեր տիպեր, մի բան, որ հնարավորություն է տալիս նրան որոշելու հայերենի և հիշյալ լեզուների ազդակցության աստիճանը, ինչպես նաև լուծելու այդ լեզուների պատմության որոշ չպարզաբանված հարցեր: Հիշյալ աշխատությունները խոշոր ներդրում են ոչ միայն հայ լեզվաբանության, այլ նաև պատմահամեմատական լեզվաբանության մեջ: Սրանք այն աշխատանքներն են, որոնք տպագրվելով ուսուցեն, նաև եվրոպական լեզուներով, համաշխարհային հանաչում բերեցին տաղանդավոր գիտնականին:

Մեծ է բազմավաստակ գիտնականի ավանդը նաև հայ բարբառագիտության բնագավառում: «Հայ բարբառագիտության ներածություն» մեծարժեք աշխատության մեջ բնագատելով հայ բարբառների միահատկանիշ դասակարգումները՝ հեղինակը առաջարկում է բազմահատկանիշ վիճակագրական դասակարգում՝ հիմնված 100 հնչյունական և բերականական հատկանիշների վրա, մի դասակարգում, որ խոշոր առաջընթաց բայց և՛ նախորդ դասակարգումների համեմատությամբ, անմիջապես ընդունվեց մասնագետների կողմից և այժմ կիրառվում է Հայկ. ՍՍՀ ԳԱ լեզվի ինստիտուտի կողմից հայ բարբառների ատլասի կազմման աշխատանքներում: Պատմական բարբառագիտության համար կարևոր է հիշյալ աշխատության երկրորդ մասը, որտեղ բնկվում են տարածամասկայա բարբառագիտության բազմաթիվ կենդանի հարցեր, հեղինակը տալիս է V դարի հայ բարբառների դասակարգումը, բնկում զրական լեզվի և բարբառների փոխհարաբերության հարցը, բերում հին հայկական տեքստերում չվկայված և հայ բարբառներում պահպանված հնդեվրոպական արմատներ և այլն:

Ժամանակակից հայերենը ևս դուրս չի մնացել Գ. Զահուկյանի ուսումնասիրության ոլորտից: Այս բնագավառի աշխատանքներից անհրաժեշտ է նշել «Հայոց լեզվի զարգացումն ու կառուցվածքը» (1969) և «Ժամանակակից հայերենի սեռության հիմունքներ» (1974) մեծարժեք աշխատությունները: Վերջինս լեզվի համաժամանակյա ուսումնասիրության մի համապարփակ ուսմունք է, խոշոր ներդրում լեզվի տեսության բնագավառում: Այստեղ ևս իրեն զբաղեցրելով որպես նորարար-գիտնական և հետևողականորեն կիրառելով իր կողմից մշակված հարաբերակցային մեթոդը՝ Գ. Զահուկյանը ներկայացնում է ժամանակակից հայերենի կառուցվածքի բոլոր կողմերով:

Խմաստակիր լեզվական միավորները նա բնկության է առնում սկզբում արտահայտության պլանում, ապա կադապարների առանձին հատվածների արտահայտության միջոցների հնչյունային բաշխման և փոխակերպման միջոցով անցնում է բովանդակության պլանին, որի տարրերը համակարգվում են ըստ արտահայտության միջոցների կադապարային դիրքի, ըստ արտահայտության ձևերի և եղանակների տարբերության: Առանձին գլխով, առաջին անգամ հայ լեզվաբանության մեջ, ուսումնասիրված են փոխկադապարման հարցերը՝ համադասությունը, խոսքի մասերի փոխակերպումն ու փոխանցումը, նախադասության փոխակերպումն ու բարդ նախադասությունները: Ըստ որում Հեղինակի մշակված և կիրառված փոխկադապարմումը արմատապես տարբերվում է հայտնի փոխակերպման մեթոդից:

Լեզվի գիտության համար խոշոր երևույթ է «Ընդհանուր և հայ լեզվաբանություն» աշխատությունը (1979), որտեղ ներկայացված են ընդհանուր և հայ լեզվաբանության բնագավառում գիտնականի կատարած հետազոտությունների վերջին բազմազան դարի արդյունքները: Ընդհանուր լեզվաբանությանը վերաբերող մասում հեղինակի ուշադրության կենտրոնում են եղել «մետալեզվաբանական» հարցերը, այն է՝ լեզվաբանության տեղը գիտությունների համակարգում, նրա ուսումնասիրության սահմաններն ու առանձնահատկությունները, կառուցվածքը, մեթոդները, առաջին անգամ կատարվել է լեզվաբանական մեթոդների դասակարգումը, առաջարկվել է լեզվաբանական մակարդակների և բաժինների նոր խմբավորումներ, տրվել նրանց սահմանազատման հստակ չափանիշներ:

Նրկաւ տարիների մտորումների և գիտական պրպտումների արդյունք է բոլոր լեզուների և լեզվի բոլոր մակարդակների նկարագրության միասնական սկզբունքների մշակումը: Առանձնահատուկ տեղ է հատկացված ընդհանրական լեզվաբանական կադապարի սկզբունքների և կառուցվածքի մանրակրկիտ բնութագրմանը, լեզվաբանական տիպաբանությանը, լեզվաբանության այնպիսի կենտրոնական հարցերին, ինչպիսին հնչույթի և բերականական կարգերի բնորոշումն է: Հայերենի համեմատական հնչյունաբանության մեջ հեղինակին հաջողվել է հաստատել երկու հնչյունական օժեն, որոնցից մեկը վերաբերում է բաղաձայնների բնականացմանը, մյուսը՝ հնդեվրոպական բաղաձայնական կապակցությունների փոփոխությանը հայերենում: Օգտագործելով այսպես կոչված գոտոտոխոնոլոգիական մեթոդը՝ հեղին-

օակր փորձել է որոշել հայերենի «տարիք», հնգեվրոպական միասնությունից նրա անջատվելու ժամանակը: Գրեում բերված տվյալների համաձայն հայերենը, որպես ինֆնուրոյն լեզու, գոյություն ունի մ. թ. ա. III հազարամյակից:

Գ. Զահուկյանի գիտական բազմաբովանդակ վաստակի մեջ զգալի տեղ են զբաղեցնում բարձրագույն ու միջնակարգ դպրոցների համար գրված աշխատությունները, որոնք մեծապես նպաստում են մայրենի լեզվի դասավանդմանը: Նրա գրչին են պատկանում «Հայոց լեզու» բուհական ձեռնարկի ընդհանուր-ներածական մասը, «Հայոց լեզու-ընդհանուր գիտելիքներ, ռեպրանություն» դպրոցական ձեռնարկը (Ֆ. Խլաթյանի հեղինակակցությամբ):

Գ. Զահուկյանը մեկն է մեր այն նշանավոր գիտնականներից, որն իր գիտական գործունեությունը զուգակցել է զուգակցում է մանկավարժական գործունեությանը՝ իր հարուստ գիտելիքներն ու փորձը հաղորդելով սերունդներին: 1945 թ. նա Երևանի պետական համալսարանում վարել է վարում է ժամանակակից հայոց լեզվի, գրաբարի, հայոց լեզվի համեմատական բերականության, ընդհանուր լեզվաբանության, լեզվաբանության պատմության, գերմանական լեզուների պատմության և այլ դասընթացներ: Մեծ է նրա Երախտիք նաև գիտական կադրեր պատրաստելու գործում: Այս բնագավառում ևս նա աչքի է ընկնում արտակարգ բարեխոնությամբ և գիտական պահանջկոտությամբ: Նրա ղեկավարությամբ դիսերտացիաներ պաշտպանած շատ ու շատ լեզվաբաններ գիտական ու մանկավարժական աշխատանք են կատարում հանրապետության բուհերում ու գիտական հիմնարկներում:

Գ. Զահուկյանը խոշոր աշխատանք է կատարել նաև որպես գիտության կազմակերպիչ: 1947—1957 թթ. ղեկավարել է համալսարանի օտար լեզուների, իսկ 1947—1970 թթ.՝ ուսման-գերմանական բանասիրության ամբիոնները: 1962 թ. նա ՀՍՍՀ ԳԱ լեզվի ինստիտուտի դիրեկտորն է: Նրա ղեկավարությամբ զգալի աշխատանքներ են կատարվել ինստիտուտի պրոբլեմատիկայի ընդլայնման ու սուբիականացման, լեզվաբանական նոր տեսությունների ու ուղղությունների գծով աշխատանքի ծավալման, գիտական արտադրանքի որակի բարձրացման, կադրերի պատրաստման, միութենական ու արտասահմանյան համապատասխան գիտական կենտրոնների հետ կապերը ընդլայնելու և այլ ուղղություններով:

Գ. Զահուկյանը նաև ակտիվ հասարակական գործիչ է: Նա ՀՍՍՀ լուսավորության մինիստրության հայոց լեզվի գիտամեթոդական խորհրդի նախագահն է, ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին կից տերմինաբանական կոմիտեի նախագահի տեղակալը, բարձրագույն ուսումնական հաստատությունների մինիստրության հայոց լեզվի գիտամեթոդական խորհրդի անդամ:

Գ. Զահուկյանի վաստակի արժանի գնահատականն էր նրան Հայաստանի գիտության վաստակավոր գործչի կոչում շնորհելը, ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս ընտրելը, «Պատվո նշան» շքանշանով ու մեդալներով, ՀՍՍՀ Գերագույն սովետի պատվոգրով պարգևատրելը:

Մեծահամբավ գիտնականը գտնվում է իր գիտական-ստեղծագործական ուժերի ծաղկման շրջանում: Ցանկանալով նրան փառադրություն և ստեղծագործական նոր վերելք ի շան հայրենի գիտության:

Բանասիր. գիտ. դոկտոր Ն. Ա. ՊԱՌՆԱՍՅԱՆ